

արդէն Պիրոմալլիի գրած ամբաստանագրի մասին: Իբրեւ «խառնակիչ»⁸ չի հանդուրժուիր Պիրոմալլի յԱպարաներ: Անիկա 26 Յունիս—2 Յուլիս 1632 Երեւան կը գտնուէր⁹, հաւանօրէն խնդրելու Մովսէս կաթողիկոսի միջնորդութիւնը Նախիջեւանի Արքեպիսկոպոսի զայրոյթը զիջեցնելու համար: Մովսէս սիրով յանձն կ'առնէ այս հաշտարար դերը: Ունիմ աչքի առաջ համառօտութիւնը¹⁰ Նամակի մը, զոր գրած է Մովսէս կաթողիկոս առ արքեպիսկոպոսն Նախիջեւանի, որով կը յորդորէ Արքեպիսկոպոսն, որ անյիշաչար ըլլայ հանդէպ Պիրոմալլիի, «հաշտուի անոր հետ, անտես ընելով անոր յանցանքներն եւ իր, արքեպիսկոպոսի, մասին առ Քահանայապետն գրած ամբաստանագիրն կամ զրպարտութիւնները»:

Պիրոմալլի կը վերադառնայ Ապարաներ: 1632, Օգոստոս 12ին կը գրէ ասկէ իւր յետակոչումը առ Ուրբանոս Ը.¹¹, շեշտելով թէ մոլորացում է ինքը ուրիշներու սխալ տեղեկատուութեամբ եւ թէ իւր վերջին 40օրեայ զննութեամբ գտած է ամենայն ինչ յԱպարաներ կարգի եւ կանոնի մէջ: Բայց Արքեպիսկոպոսը անդիջող կը հանդիսանայ. 19 Օգոս-

⁸ Անդ, ք. 192:

⁹ Գրած է ասկէ թղթեր 26 Յունիս եւ 2 Յուլիս. անդ, ք. 185 եւ 187:

¹⁰ Մովսիսի թուղթը, որ առանց թուականի է, հասած է Ֆրա Յովհ. Դոմինիկոյի լատիներէն թարգմանութեամբ. անդ, ք. 194:

¹¹ Անդ, ք. 191: